ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի նոր կազմը համալրելու համար Ամասիա համայնքի ավագանին հայտարարում է մրցույթ, համայնքի կողմից խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամի ընտրության համար: Մրցույթին կարող են մասնակցել 16-30 տարեկան այն երիտասարդները, որոնք՝

ա) տիրապետում են երիտասարդներին առնչվող կրթական, սոցիալական, զբաղվածության, առողջապահական և մշակութային խնդիրներին.

բ) ունեն երիտասարդական կազմակերպություններում տարբեր ծրագրերի կամ միջոցառումների մասնակցության փորձ.

գ) ունեն երիտասարդական քաղաքականության բնագավառում միջազգային կամ հանրապետական փորձ, պետական և հանրային կառավարման համակարգի, ծրագրերի մշակման, իրականացման և գնահատման առանձնահատկությունների իմացություն.

Մրցույթը կկայանա 2018 թվականի օգոստոսի 14-ին, ժամը 12-ին, Ամասիայի համայնքապետարանում:

Դիմումներն ընդունման ժամկետն է 2018թ. օգոստոսի 10-ը ներառյալ:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմ /Ամասիա համայնք, 26-րդ փողոց, շենք 19/, հեռ.՝ (0246) 2-29-25:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ամասիա համայնքի ավագանի

17. 07. 2018թ.

գ. Ամասիա